

ՄՈՎԵՏԱՀԱՅ ԲԺՇԿԱ-ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ
40 ՏԱՐՈՒՄ

Հայաստանում զարգացող բժշկականության պատմության ընդհանուր շարադրանքը անցյալում մինչև սովետական կարգերի հաստատումը ոչ ոք չէր ավելի XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին հրապարակ եկան մի շարք հեղինակներ (Ղ. Հովնանյան, Ա. Սուբրյան, Վ. Թորգոմյան, Կ. Բասմաջյան և ուրիշներ), որոնք հատուկ աշխատություններ նվիրեցին հայ բժշկագիտության պատմության առանձին հարցերին: Դրանց կարելի է բաժանել երկու խմբի:

Առաջին խմբի հեղինակների նպատակն է եղել լուսաբանել հայ բժշկագիտության առանձին էտապները: Երկրորդ խումբն ուսումնասիրել է հայ բժիշկների առանձին գործերը, երբեմն ոչ միայն բժշկական, այլև բանասիրական-լեզվաբանական տեսանկյունով: Այդ ուսումնասիրություններում իշխել է այն տեսակետը, որ իբր թե մինչև արաբների կողմից Հայաստանի գրավումը՝ հայերը բժշկական կուլտուրա չեն ունեցել:

Այդ պատկերացումը հաստատվել է այն փաստարկումով, որ մեզ հասած միջնադարյան հայ բժշկական մատենագրության մեջ որոշ տեքստներ, ինչպես նաև անտիկ շրջանի հույն բժիշկների անունները բերված են արաբական արտասանության ձևով՝ հայերեն տառադարձությամբ: Այսպես, օրինակ, Արսեն Սուբրյանը գրում է. «Մեր ձեռքը ունեցած հայերեն բժշկարաններն... ամենքն

1 Ղ. Հովնանյան, հետազոտությունք նախնեաց ուսմկորննի վրա, մասն առաջին, Վիեննա, 1897:

ալ, ինչպես կը վկայեն բժշկաց անվանքն և դեղոց և անոնց կերպերուն և բժշկական բառերուն անուններն՝ նաև այն բժիշկներուն, որ հույն են՝ մեր նախնիք արարական թարգմանութենէ առնելով՝ արարացի հնչումն տված են, ինչպես Իսպոլիրատես երեւի բժիշկն եղած է մեր բժշկարանոց մէջ՝ Պուլրատ. Բուլրատ,— Գաղենոս, Գելլիանոս, Ճալլինոս—Ռոսիոս, Ըսուպոս, Ըսուպոս, Ըսոֆոս, Որիւրաս՝ Ռուրաս,— Պալլոս Էդենացուն՝ Ֆուրոս, Ֆլոս, Ֆուլուս, Ֆուլուս,— Արխիդենիս՝ Արճիճանիս, Արճիճասուս¹ և այլն:

Հետագայում Ղեոնդ Հովնանյանը², այնուհետև Կարապետ Քասմաջյանը ալիւի որոշակի են գրում. «Երբեք չեմ վարանիր հայտարարելու թէ մեր նախնի բժիշկներն ևս ամբողջապես առանց բացառութեան, օգտված են արարական գործերէն»³, նույն տեղում շարունակութեան մէջ, նա ասում է. «Արդ՝ տարակույս չկա թէ հայ բժշկականութեան ծագումն արարական է»⁴ և այլն:

Հայաստանում զարգացող բժշկագիտութեան պատմութեան ուսումնասիրութեան շնորհակալ գործում լղալի աշխատանք են կատարել սովետահայ բժշկագիտութեան պատմաբանները: Այստեղ ամենից առաջ պետք է նշել Հայկական ՍՍՌ Գիտութեանների ակադեմիայի ակադեմիկոս Լ. Ա. Հովհաննիսյանի «Բժշկութեան պատմությունը Հայաստանում» (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը) հինգ մասից բաղկացած մեծարժեք աշխատությունը, որը լույս ընծայվեց ռուսերեն լեզվով 1946—1947 թվականներին:

Նրկար տարիների ընթացքում հետազոտելով հայ և օտարազգի պատմիչների գործերը, ժողովրդի նյութական կուլտուրան, ազգագրութեան տվյալները, հեղինակը ցույց տվեց, որ Հայաստանում բժշկական կուլտուրան սկսել է զարգանալ տակավին մեր թվականությունից դարեր առաջ:

Այնուհետև նա ապացուցում է, որ մեզ մոտ բժշկականությունը զարգացել է անտիկ աշխարհի հունա-հռոմեական և Արեւելքի երկրներում աճող հելլենիստական կուլտուրաների փոխադրեցութեան ուղիով: Իր աշխատության մէջ նա վկայաբերում ու քննար-

1 «Բաղմալէպ», 1881, էջ 33—37:

2 Ղ. Հովնանյան, Հետազոտութիւնք նախնեաց ռամկորենի վրա, էջեր 114 և 123—125:

3 Նույն տեղում:

4 Ամբողջաբար Ամասիացի, Անդիտաց անպէտ, Վիեննա, 1927, Կ. Քասմաջյանի, առաջարան, էջ ԺԷ:

կում է պատմական իրական բազմաթիվ փաստեր, որոնք անհերքելի են դարձնում վերևում առաջադրված տեսակետը: Թվինք դրանցից միայն մի քանիսը:

Տակավին մեր թվականությունից շատ առաջ, Հայաստանում գոյություն է ունեցել հատուկ այգի, որտեղ աճեցրել են զանազան դեղաբույսեր: Հանրահայտ է, որ հնագույն ժամանակներից սկսած մեզ մոտ պատրաստվող բազմաթիվ դեղամիջոցներից շատերը, կիրառական բժշկականության մեջ տարբեր հիվանդությունների բուժման գործում իրենց ցուցաբերած բարերար ներգործության շնորհիվ, արտահանվում էին արտաքին շուկաները (Արևելքի և Արևմուտքի երկրներում) և մեծ տարածում էին գտել այնտեղ: Դրանց թվին են պատկանում հայկական կավը (*Bolus armena*), կապույտ քարը (*Pietra armena* կամ *Chry sacolla*), հայկական բորակը (*Армянская буба*, *Asa foetida*), նաշատիրը, որը կոչվել է «արմենիակ», որտեղից էլ, ըստ Շելինգի, առաջացել է նվազական *ammonium* և այլն²:

365 թվականին Աշտիշատի եկեղեցական ժողովի որոշման համաձայն, երկրի զանազան մասերում կառուցվում են հիվանդանոցային հիմնարկներ, վարակիչ հիվանդություններին առանձնացնելու նպատակով՝ մեկուսանոցներ, անապաստան և անխնամ մնացող ծերերի ու հաշմանդամների համար՝ հատուկ տներ³: Իսկ Կեսարիայում և Սեբաստիայում (Փոքր Հայքում) դեռևս IV դարում արդեն գործում էին հանրահայտ հիվանդանոցներ, որոնք ունեին ներքին, վիրաբուժական և ինֆեկցիոն հիվանդությունների առանձին բաժանմունքներ՝ իրենց սպասարկող հմուտ բժշկական անձնակազմով: Հնդհանուր բժշկագիտության պատմության մեջ այդ հիվանդանոցները կոչվում են *Basileas*⁴:

Այնուհետև Լ. Ա. Հովհաննիսյանը հանգամանորեն կանգ է առնում V—VII դարերում ապրած հայ հեղինակներից Նզնիկ Կողպացու, Մովսես Խորենացու, Նղիշիի, Դավիթ Անհաղթի, Հովհաննես Մայրեվանեցու պատմական, փիլիսոփայական գործերում արժարժված կենսաբանական հարցերի զննատման վրա: Նա ցույց է տալիս, որ այդ հարցերը առնչվում են հիշյալ ժամանակաշրջանի

¹ Л. А. Оганесян, История медицины в Армении, ч. I, Ереван, 1946, стр. 238.

² Там же, стр. 57—59.

³ Ա. Դզմեյան, Կանոնագիրք հայոց, Թիֆլիս, 1913, էջ 13:

⁴ Т. Мейер-Штейнгер и К. Зудгов, История медицины, пер. со II немецкого изд., Москва, 1925, стр. 149.

բժշկագիտական տեսական խնդիրների հետ, և եղբակացեալ է, որ դրանք դիտվել են անտիկ աշխարհի և հելլենիստական երկրներում զարգացող գիտությունների մակարդակի համեմատ:

Վաղ միջնադարյան Հայաստանում բժշկագիտության զարգացման փուտի մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ VI—VIII դարերի ընթացքում հայերեն են թարգմանվում հունա-հոմեոսական, բյուզանդական մի շարք հելլենական¹ Հիպոկրատի, Արիստոտելի, Գալենի, Դիոսկորիդոսի, Օրբիսկուսի, Նեմիսյուսի դասական աշխատությունները:

Քննվող հարցի կապակցությամբ վերին աստիճանի հետաքրքրական են նաև VI դարի բյուզանդական ականավոր բժիշկ Ալեքսանդր Թրակացու վերաբերյալ Ս Ս. Կովների հաղորդած տվյալները: Կովները գրում է, թե Ալեքսանդր Թրակացին խոստովանում է, որ պեղերիտների բուժման ձևերը և կերպերը, ինքը սովորել է հայ բժիշկներից, որոնք տարածված էին ամենուրեք²:

Պարտավի 771 թ. կիկղեցական ժողովի արձանագրությունից զգացվում է արարական արշավանքների հետևանքով Հայաստանում տուժած հիվանդանոցային շենքերը վերանորոգելու և նորերի կառուցելու մտադրությունը:

VII դարի հայ ականավոր մաթեմատիկոս, աշխարհագրագետ և աստղաբաշխ Անանիա Շիրակացին, պայքարելով ժողովրդի մեջ տարածված ախթարական-միստիկական-մոգական հավատալիքների և ըմբռնումների դեմ, օգտագործում է իր ժամանակաշրջանում բժշկագիտության բնագավառում ձևոք բերված նվաճումները: Այսպես, օրինակ, նա գրում է՝ եթե դուք կամենում եք իմանալ հղի կնոջ մոտ պտուղը կենդանի է, թե մահացած, դուք միք դիմի ախթարներով և հմայիլներով՝ դադվող մարդկանց, այլ դիմեցեք բժիշկներին, որոնք լսելով հղի կնոջ մոտ պտղի սրտի բաբախումները, որոշակի կպատասխանեն ձեզ՝ պտուղը կենդանի է, թե ոչ²:

Վերը բերված պատմական փաստերը, հաստատում են՝ այն դրույթը, որ մինչև արարների արշավանքը Հայաստանը ունեցել է բավականին զարգացած կիրառական և տեսական բժշկագիտություն:

Հայ բժշկագիտության պատմության ուսումնասիրության գոր-

¹ С. Ковнер, История средневековой медицины, Киев, 1893, стр. 92.

² Անանիա Շիրակացի. Տիեզերագիտություն և տոմար, Երևան, 1940, էջ 31 (պատրաստ. հրատ. պրոֆ. Ա. Աբրահամյանը):

ծում արժեքավոր աշխատություններ են տվել՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հայ բժշկության և բիոլոգիայի պատմության նախկին սեկտորի (1945—1955) աշխատակիցները¹։

Հայաստանում բժշկագիտության ծագման ժամանակը և ուղղությունը որոշելու կարևոր հարցերին է նվիրված Խ. Ա. Մելիք-Փարսադանյանի ուսումնասիրությունը։ Հետազոտելով վաղ միջնադարյան հայ գրականությունը, նա ուշադրություն է դարձնում հայ հին բժշկական, կենսաբանական լեզուիկայի, մասնագիտական նշանակություն ունեցող բառ-տերմինների վրա և որոշում է դրանց առաջացման ժամանակն ու հանգամանքները։ Նա հանգում է այն եզրակացությանը, որ մինչև արաբների կողմից Հայաստանի գրավելը (VII դ.), հունարենից, պարսկերենից, ասորերենից և անհայտ ալլելոներից փոխառնված և յուրացված տերմիններից բացի, հայերն ունեցել են բնագիտական, ընդհանուր կենսաբանական, բժշկական նշանակություն ու իմաստ արտահայտող սեփական այնքան բառ-տերմիններ, որոնք հնարավորություն են ընձեռում տակավին V—VII դարերում ստեղծելու աստվածաբանական, պատմական-փիլիսոփայական, ինչպես ինքնուրույն, ինչպես էլ թարգմանական դրականություն։ «Այս դարաշրջանում,—գրում է Խ. Ա. Մելիք-Փարսադանյանը,—հայ ամբողջ բառապաշարի մեջ բժշկական բնագիտական արմատական բառ-տերմինների թիվը հասնում է 900-ի»²։ Տրամաբանական է, որ այդ բավականին հարուստ տերմինների օգնությամբ, հայերը կարողացել են ի թիվս այլ գիտությունների զարկ տալ նաև բժշկագիտությանը։

Այդ հիմնական եզրակացությանն է հանգում նաև հոգեբույժ Հ. Յազմաչյանը, որն ուսումնասիրելով Մատենադարանի ձեռագրական նյութերը և հնատիպ գրականությունը, գրել է «Հոգեբուժության հայացքները Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև XI դարը»³ մենագրական արժեքավոր աշխատությունը։ Հենվելով

1 1958 թ. Հայկական ՍՍՌ ԳԱ Հայ բժշկության և բիոլոգիայի պատմության սեկտորը վերակառուցվեց և ԳԱ-ին առընթեր կազմակերպվեց Բնագիտության և տեխնիկայի խորհուրդը։

2 Խ. Ա. Մելիք-Փարսադանյան, Հայ հին բժշկական և բիոլոգիական լեզուիկայի ծագման մասին, տես՝ ՀՍՍՌ ԳԱ Հայ բժշկության և բիոլոգիայի պատմության սեկտորի գիտական աշխատությունների ժողովածու. № 2, Երևան, 1949։

3 Հ. Յազմաչյան, Հոգեբուժության հայացքները Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև 11-րդ դ., Երևան (մեքենագիր), թեկնածուական դիսերտացիա, 1954։

վաղ միջնադարյան հայ հեղինակների (Մովսես Խորենացի, Եղիշե, Եղնիկ Կողպացի, Հովհան Մայրիվանցի և ուրիշ.) աշխատությունների վրա ցույց է տալիս, որ հոգեկան հիվանդությունները, ինչպես նաև հոգեբանության խնդիրները Հայաստանում քննության են տոնվել անտիկ աշխարհի, հելլենիստական երկրներում զարգացող գիտությունների մակարդակի համեմատ, Հեղինակը ընդգծում է այն ուշագրավ փաստը, որ հին Հայագետանում հոգեկան հիվանդների նկատմամբ ցուցաբերվել է խնամք և հոգատարություն:

Նախառույտյուն հայ բժշկապատմագրությունը մոռացություն է տվել այն հանրահայտ փաստը, որ արարներն իրենց հաղթական էքսպանսիվ պատերազմներից հետո, ինչպես Ս. Ս. Կոլներն է վկայում, VIII դարի վերջերին ունեին ընդամենը մեկ բժշկական և երեք ալքիմիայի ձեռագիր: Այնուհետև պատմական իրողություն է, որ իրենց արշավանքներից հետո երկար ժամանակ արարները զբաղված էին թարգմանությունների միջոցով տիրապետելու անտիկ աշխարհի և հելլենիստական երկրներում ստեղծված բարձր մշակույթին, հասկանալի է, նաև բժշկագիտությանը: Առանց այդպիսի օգտակար գործունեության նրանք անկարող կլինեին X—XI դարերում, հատկապես բնական գիտությունների և բժշկագիտության բնագավառում, կատարելու համաճանաչում դրած առաջադիմական խոշոր թռիչքը:

Իսկ ինչ վերաբերում է նրանց այն փաստարկմանը, որ միջնադարյան հայ բժիշկների մեղ հասած գործերում օգտագործված են, այսպես կոչված, արաբական բժշկագիտական բառ-տերմիններ, այդ ճիշտ է: Սովետահայ բժշկապատմաբանները այդ երևույթը օրինաչափ են համարում, որովհետև միջին դարերում արաբական լեզուն, հատկապես Արևելքի երկրներում, հասկանալի պատճառներով միջազգային իրավունք էր ձեռք բերել և համարվում էր զրախանության ու գիտության լեզու, ճիշտ այնպես, ինչպես լատիներենը՝ Արևմուտքում:

Հասկանալի է, որ միջնադարյան հայ բժիշկները չէին կարող դերժ մնալ այդ ազդեցությունից: Այդ հեղինակները մոռացության են տվել և շեն նկատել, որ մեր բժշկարաններում արաբական տերմինների հետ մեկտեղ, հիմնականում օգտագործված են միջին հայերենով կազմված բավականին հարուստ հայկական մասնագիտական բառ-տերմիններ: Դա ապացուցում է, որ բացի Գրիգոր Մագիստրոսից, հունարեն են իմացել և օգտվել են հունական գրա-

Պանուկյունից բժշկապետ Մխիթար Հերացին (XII դ.), Գրիգոր Տաթևացին (XIV դ.), Ամիրզովլաթ Ամասիացին (XV դ.)¹, Ինչպես հայտնի է, այս հարցին անդրադարձել և այն մանրամասն քննության է առել նաև հայտնի հայագետ Ստ. Մալխասյանցը²։ Ի դեպ, հօգուտ այդ բանի է խոսում նաև Մատենադարանում պահվող ձեռագիր բժշկարաններից՝ վերջերս մեր կողմից հայտնաբերած, մինչև այժմ անհայտ հայ բժիշկ Գրիգորիսի (XIII դ.) մեծածավալ ու ջատ արժեքավոր աշխատությունը։ Նրա բազմակողմանի ու խորը ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակը այդ աշխատությունը կազմելու ընթացքում իր տրամադրության տակ է ունեցել անտիկ և միջնադարյան բժշկագիտության պարծանք Հիպոկրատի (460—377 թթ.՝ մ. թ. ա.) էպիդեմիոլոգիայի և պրոգնոզի վերաբերյալ երկու գրքերը։ Գրիգորիսի՝ Քենոթիւն բնութեան մարդոյս և նորին զանազան կրից և պատճառանաց հիւանդութեան» աշխատության մեջ հայերեն տառադարձությամբ բերված են հունարեն բժշկագիտական տերմիններ՝ անփոփոխ վիճակում³։ Այդ նշանակում է, որ միջնադարյան հայ բժիշկները իրենց կիրառական, մանկավարժական, գիտական և գրական գործունեության ընթացքում օգտվել են ոչ միայն արաբական, այլև անտիկ շրջանի հույն և այլազգի հեղինակների բժշկագիտությանը վերաբերող դասական բնագրերից։

Սովետահայ բժշկապատմաբանները հետազոտական զգալի աշխատանքներ են կատարել, որոնք վերաբերում են, զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանի (X—XIII դդ.) Հայաստանում զարգացող բժշկագիտության պատմության պրոբլեմին։

Ամենից առաջ պետք է արձանագրել, որ սովետահայ բժշկապատմաբաններն իրենց կատարած ուսումնասիրություններում նշում են, որ պատմական հանրահայտ պայմանների բերմամբ X—XIII դարերի ընթացքում Հայաստանում արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների զարգացման մեջ տեղի են ունենում զգալի տեղաշարժեր, որոնք պայմանավորում են հայ

1 Լ. Ա. Հովհաննիսյան, բժիշկ Ամիրզովլաթ Ամասիացի, «Տեղեկագիր» ՍՍՌՄ ԳԱ հայկական ֆիլիալի, Երևան, 1941 թ., № 3, 4, էջ 117—126։

2 Ամիրզովլաթ Ամասիացի, Օգուտ բժշկութեան, Ստ. Մալխասյանցի գրած առաջաբան, Երևան, 1940, էջ ԺԷ—ԺԸ։

3 Ա. Ս. Կոռյան, «Քենոթիւն բնութեան մարդոյս և նորին զանազան կրից և պատճառանաց հիւանդութեան» (տես «Բանբեր Մատենադարանի», № 4, 1958 էջ 205—220)։

ժողովրդի հոգևոր կյանքի բոլոր բնագավառներում նկատվող նոր
որակեր և սեպկոտական ուղղությունը:

Հայաստանում հիշյալ ժամանակաշրջանում զարգացող քժր-
կադիստության պատմությանն է նվիրված Վ. Ա. Հովհաննիսյանի
«Բժշկության պատմությունը Հայաստանում» աշխատության 2-րդ
գիրքը: Այստեղ հեղինակը քննության է առնում XI—XIV դարերից
մեզ հասած մի շարք ձեռագիր և տպագիր բժշկական աշխատու-
թյուններ, հայ և Հայաստանում օտարազգի բժիշկների գործունեու-
թյունը, ուշադրով տվյալներ է հաղորդում հիվանդանոցային հիմ-
նարկների ու բժշկական դպրոցների մասին: Ավելի մանրամասն
անդրադառնում է ընդհանուր բժշկագիտական և հատկապես մար-
դու մարսողական ուղիների ֆիզիոլոգիայի հարցերի շուրջը Գրիգոր
Մադիսարոսի (XI դ.) ու հույն բժիշկ Կլուրակոսի միջև տեղի ունե-
ցած հետաքրքրական բանավեճին: Այստեղ հեղինակը նշում է, որ
բանավեճի ընթացքում Մադիսարոսն իրեն զրսևորում է սրպես
ժամանակաշրջանի գիտության նվաճումների քաջ ծանոթ ու գիտ-
նական-տեսաբան: Գրքի 80 ընդարձակ էջերում հանգամանորեն
վերլուծում է XII դարի հայ ականավոր բժշկապետ Մխիթար Հե-
րացու կյանքը և գիտական գործունեությունը: Նա առանձնապես
կանգ է առնում այդ ժամանակաշրջանի խոշորագույն բնագետ-
բժշկի մեզ հասած «Ջերմանց մխիթարություն» հայտնի աշխատու-
թյան վրա, որը նվիրված է Հայաստանում լայն տարածում գտած
սուր վարակիչ հիվանդություններին, որոնք, ինչպես վկայում է նրա
հեղինակը, շարունակ հյուծել են հայ ժողովրդին: Ինչպես սուր վա-
րակիչ հիվանդությունների, այնպես էլ ընդհանուր բժշկագիտա-
կան տեսական ու կիրառական հարցերը քննելիս՝ Մխիթար Հե-
րացին լրիվ ինքնուրույնություն և խիստ քննադատական մոտեցում է
ցուցաբերում իր ձեռքի տակ եղած գրականության հանդեպ: Ավե-
լին՝ բժշկապատմաբաններ Վ. Թորգոմյանը, Ferran-ը, Seidel-ը,
Լ. Հովհաննիսյանը, Խ. Մելիք-Փարսադանյանը, ուսումնասիրելով
«Ջերմանց մխիթարություն»-ը, հանգել են այն եզրակացության, որ
նրա հեղինակը սուր վարակիչ հիվանդությունների պատճառագիտու-
թյան (etiopatogenesis) հարցում, ժամանակաշրջանի գիտության
զարգացման համեմատ առաջ է քաշում բոլորովին նոր և առաջա-
դեմ տեսակետ: Ըստ Մխիթար Հերացու՝ տիֆային և մի շարք սուր
վարակիչ այլ հիվանդություններ ծագում են այն ժամանակ, երբ

երակները ներսում արյունը ենթարկվում է «բորբոսման»։ Իսկ Մալարիային հիվանդությունները առաջանում են «լորձի բորբոսումից»¹։

Վերոհիշյալ գիտնականները, հետազոտելով «Ջերմերի բորբոսային» տեսության էությունը, գտնում են, որ Մխիթար Հերացին դրանով հանճարեղորեն կռահել է ինֆեկցիոն պրոցեսի գաղափարը։ Այս կապակցությամբ Լ. Հովհաննիսյանը գրում է. «...օբյեկտիվ և անհերքելի փաստ է, որ մինչև բակտերիոլոգիայի դարը ոչ մի բժիշկ չի օգտագործել ինֆեկցիոն պրոցես արտահայտող տերմին, որը իրականությունն այնքան մոտ լիներ, ինչպես այդ արել է Մխիթար Հերացին»²։

Անհրաժեշտ ենք համարում այստեղ նշել, որ XI—XIV դարերում մեզ մոտ զարգացող բժշկագիտության պատմությունը Լ. Ա. Հովհաննիսյանը բնութագրում է որպես հայկական ռենեսանսին հատուկ ուղղություն։

XI—XIV դարերի Հայաստանում զարգացող ինքնատիպ բժշկական կուլտուրայի զնահատության տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում Լ. Ս. Խաչիկյանի «Դիաֆերձումները հին Հայաստանում»³ աշխատությունը, որտեղ հեղինակը, հենվելով Հովհաննես Երզնկացու-Պլուզի (XIII դ.) հաղորդած հավաստի տվյալների վրա, համոզիչ կերպով ցույց է տալիս, որ Հայաստանում հիշյալ ժամանակաշրջանում բժշկագիտության զարգացման և ուսուցողական նպատակներով մահվան դատապարտվածներին ենթարկել են կենդանահատումների (vivisection) մի բան, որ այդ նույն ժամանակաշրջանում չէին կատարում աշխարհի ոչ մի այլ երկրում։ Այնուհետև նույն այդ աշխատության մեջ Լ. Ս. Խաչիկյանը պատմական-բանասիրական ուշագալ տվյալներով ապացուցում է, որ Հայաստանում գոյություն են ունեցել բարձրագույն բժշկական դպրոցներ (վարդապետարաններ) և «բժշկանոցներ», այսինքն՝ կլինիկաներ, որտեղ պրակտիկ ձևով է տարվել ուսուցումը³։

Հմուտ մանկաբարձ և գինեկոլոգ-բժիշկ Գ. Գ. Հարությունյանը մատենագրական սկզբնաղբյուրների հետազոտության հիման վրա բացահայտեց, որ միջնադարյան հայ բժիշկներն ունեցել են ստույգ գիտելիքներ կնոջ միզասեռական օրգանների անատոմիայի և ֆի-

1 Մխիթար Հերացի, Ջերմանց մխիթարություն, Վենետիկ, 1832։

2 Լ. Ա. Հովհաննիսյան, «Բժշկության պատմությունը Հայաստանում» աշխատության 2-րդ գիրք, Երևան, 1946, էջ 120—121։

3 Լ. Ս. Խաչիկյան, Դիաֆերձումները հին Հայաստանում, Հայկական ՍՍՌ ԳԱ-ի հասարակ. գիտութ. բաժ. «Տեղեկագիր», 1947, 4։

դիոլոգիայի վերաբերյալ՝ Ուսումնասիրելով ձեռագրական նյութերը, Գ. Հարությունյանը բացահայտեց, որ այդ շրջանի հայ բժիշկները բեղմնավորման վերաբերյալ կատարել են խոշոր առաջադիմական քայլ՝ Հակոտակ այդ ժամանակաշրջանում գրականության մեջ ընդունված—Արիստոտելի տեսակետի, ըստ որի բեղմնավորումը առաջանում է այն դեպքում, երբ աղամարագու «սերմը» (spermatozoid-ը) բնկնում է դաշտանի արյունային միջավայր և այնտեղ բնվելով, նրանից գոյանում է սաղմը, հայ հեղինակները դառնում են, որ այն առաջանում է աղամարագու և յինոջ «սերմերի» (սեռական բջիջների) միավորումից¹։

Սկզբնաղբյուրների և ձեռագրական ավյալների օգնությամբ Գ. Հարությունյանը բացահայտեց, որ մանկաբարձության և գինեկոլոգիայի բնագավառում հայ բժիշկները ձեռք են բերում զգալի նվաճումներ։ Ամենից առաջ բազմաթիվ օրինակներով նա ապացուցեց, որ XI—XIV դդ. հայ բժիշկները կատարել են կնոջ ներքին զննումը։ Այդ հանգամանքը հնարավորություն է ընձեռել նրանց՝ ճիշտ հասկանալ և նկարագրել կնոջ միզասեռական օրգանների պաթոլոգիական բազմապիսի շեղումները։ Նրանք մանրամասն նկարագրել են կնոջ անբերության բազմաթիվ պատճառները, այսպես, օրինակ, չզարգացած արգանդը, նրա թերվածությունները, փողերի նեղ լինելու հանգամանքը, կնոջ միզասեռական օրգանների տարբեր բնույթի բարորակ ու չարորակ նորագոյացությունները, ինչպես նաև զանազան բնույթի սուր և խրոնիկական բորբոքային պրոցեսները։

Ավելի հետաքրքրական են Գ. Հարությունյանի հայտնաբերած նկարագրությունները, որոնք վկայում են այն մասին, որ Հայաստանում X—XIII դարերում կատարվել են մանկաբարձական այնպիսի բարդ վիրահատումներ, ինչպես, օրինակ, պտղաշրջումը, պտղահատումը և կեսարյան հատումը։ Դրա հետ միաժամանակ տրվել են բազմաթիվ գինեկոլոգիական հիվանդությունների մանրամասն նկարագրությունները։ Հիշյալ նյութերի հիման վրա նա գրեց «Մանկաբարձությունը և գինեկոլոգիան Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև սովետական շրջանը» իր դոկտորական դիսերտացիան, որը 1952 թ. պաշտպանեց Մոսկվայում։

1 Գ. Գ. Հարությունյան, Մանկաբարձությունը և գինեկոլոգիան Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև սովետական շրջանը (դոկտ. դիսերտացիա, մեքենագիր, 1952)։

XI—XIV դարերի Հայաստանում զարգացող բժշկագիտության պատմությունը ուսումնասիրելու համար, մենք, մանրամասն ծանոթացել ենք Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում (Մատենադարանում) պահվող ձեռագրեր բժշկարանների հետ և հրատարակել ենք մի շարք հոդվածներ: Այդ աշխատությունների մի զգալի մասը լուսաբանում է այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են անատոմիային, ֆիզիոլոգիային, պաթոլոգիական անատոմիային, անամնեզին և հիվանդ օբյեկտիվ քննության մեթոդներին, ինֆեկցիային ու հավաքականության, մալարիային հիվանդություններին ու էպիդեմիոլոգիային, վիրաբուժությանը, տիֆային հիվանդություններին, X—XIV դարերի հայ հեղինակների բնագիտական հայացքներին և այլ թեմաներին: Հիշյալ աշխատություններով մենք հանգում ենք այն եզրակացության, որ զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանում հայ բժիշկները քաջ ծանոթ լինելով անտիկ աշխարհի, հելլենիստական, բյուզանդական և արաբական բժշկագիտության լավագույն տրադիցիաներին ու նվաճումներին, շարունակել են առաջ մղել մեր ինքնատիպ բժշկական կուլտուրան: Ծանաչողության և գիտության զարգացման համար հիմք են ծառայել նախնիների և իրենց անձնական փորձն ու դիտողությունը, դրանց ամփոփումն ու ընդհանրացումը: Մյուս կողմից՝ բժշկագիտությանը և բժշկական կրթությանը մեծ չափով նպաստել են մահապարտյալների կենդանահատումները և դիահերձումների պրակտիկան:

Այսպես, օրինակ, XI—XIV դարերի հայ բժիշկները կենդանահատումների, ախտաբանական դիտողությունների ու դիահերձումների միջոցով զգալի նվաճումներ ձեռք բերեցին, հատկապես տեղագրական անատոմիայի և մարդու բնախոսության բնագավառում: Բնախոսության բնագավառում նրանք հասան այն հասկացողությանը, որ մարդու մարմնի ֆիզիոլոգիական ամբողջ գործունեությունը ղեկավարում, կանոնավորում է գլխուղեղը: Ավելին, նրանց քաջ հայտնի է եղել պերիֆերիկ ներվերի, ողնուղեղի և գլխուղեղի միջև գոյություն ունեցող ֆիզիոլոգիական կապը¹:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի հայ բժիշկները հիվանդների քննության ժամանակ օգտվել են նաև անամնեզի հատուկ

¹ А. С. Кцоян, Физиологические воззрения армян-врачей в эпоху расцвета феодальных отношений, „Известия“ АН АрмССР, биологическая серия, № 5, Ереван, 1957.

մշակված հարցացուցակից՝ Այսպես, օրինակ, «մեծ խմաստասեր» Մխիթար Հերացին (XII դ.) մշակել է անամնեղի 10 հարցերը, որոնց մեջ կա նաև էպիդեմիոլոգիական բնույթի հարց։ Իսկ բժշկատես Գրիգորիսը (XIII դ.) ունի հիվանդի սուրբնկալով դանդաղաների անամնեղին վերաբերող, ըստ օրվան սխտեմների մշակած, 24 կետերից կազմված շափաղանց ուշադրով և խմատալից հարցացուցակ¹։ Այդ բոլորը վկայում են կլինիկական մտքի զարգացման մասին։

Այդ շրջանի հայ բժիշկները մերժելով Կ. Գալենի (II դ.) մետաֆիզիկ լսկալ պաթոլոգիայի գաղափարը, ընդունել են միասնական, բնդհանուր օրգանիզմի առաջադեմ տեսակետը։ Այս կապակցությամբ Մխիթար Հերացին գրում է, որ սրել հիվանդության կամ ցերմի ժամանակ նվազում է մարմնի բոլոր օրգան-սխտեմների գործունեությունը, իսկ մահվան դեպքում է միայն, որ խափանվում է ամբողջապես²։ Իսկ բժշկատես Գրիգորիսը ընդհանուր, միասնական օրգանիզմի առաջադեմ տեսակետը արտահայտել է համեմատական և պատկերավոր ձևով։ Նա գրում է, որ մարմնի բոլոր օրգանները իրենց ֆիզիոլոգիական գործունեությամբ իրար նկատմամբ աչնպես են, ինչպես հաշտ, բարյացակամ զրկիցները իրար հետ, երբ մեկն ու մեկին մի զժբախտություն է պատահում, այդ առթիվ վշտանում, տրտմում են մյուս բոլորը։

Այնուհետև այդ շրջանի հայ բժիշկները հիվանդին մոտեցել են, հանելով նրա մարմնի կոնստիտուցիոնալ առանձնահատկությունից։ Հիվանդության առաջացումը նրանք կապել են արտաքին միջավայրի հետ, թե ինչպես են արտաքին միջավայրի բազմապիսի գործոնները ազդում մարդու մարմնի վրա և առաջ բերում հիվանդություններ։ Սակայն այս կապակցությամբ հետաքրքրականն այն է, որ նրանց հայտնի է եղել վարակի և հալավարականության գաղափարը։ Ավելին, բժիշկ Գրիգորիսը նշում է վարակի տարածման երեք ուղիները՝ ա) առողջ մարդու հիվանդի հետ անմիջական շփումը, բ) հիվանդի իրերի միջոցով և գ) օդի միջոցով։ Նրանց հայտնի է եղել նաև վարակի տարածումը ջրի, սննդամթերքների ու ճանճի միջոցով և այլն։

1 Ա. Ս. Կոռյան, XII—XIV դարերի հայ բժիշկների հիվանդների հետազոտման մեթոդները (տես «Առողջապահություն», № 3, Երևան, 1956 էջ 51)։

2 Մխիթար Հերացի, Զեքմանց մխիթարություն, Վենետիկ, 1932։

Վիրաբուժության բնագավառում նրանք կատարել են բավականաչափ առաջադիմական գործողություններ: Այսպես, օրինակ, ընդհանուր նարկոզի օգնությամբ կատարել են այնպիսի բարդ օպերացիա, ինչպիսին է ազդոսկրի բաց կոտրվածքի բուժումը: Կնոջ կրծքագեղձի, ծունկ հոդի թարախային բորբոքումները բուժել են դանակով լայն և խորը կտրվածքներ առաջացնելու մեթոդով: Վերքերը բուժել են զանազան սպեղանիներով, որոնց զուգորգման մեջ մտել են ակտաճանիչ և թմրեցուցիչ հատկություն ունեցող տարբեր դեղանյութեր, ինչպես նաև վերքը փափուկ պահող ճարպեր: Օճառով, տաք ջրով և գինով պահպանել են վերքի սուռալետը և այլն¹:

XI—XIV դարերում հայ բժիշկները հետաքրքրվել են նաև այն հարցով, թե հիվանդությունների ժամանակ ինչպիսի նյութական փոփոխությունների են ենթարկվում օրգան-սիստեմները՝ դրանց տեղակայումը և բնույթը: Այդ նպատակով նրանք կատարել են դիաֆերենումներ և տարբեր հիվանդությունների դեպքում նկարագրել են նորմայից կատարված բաղամպիսի մակրոսկոպիկ պրոցեսներ: Այսպես, օրինակ, տուբերկուլյոզի ախտաբանական նկարագրություններում հանդիպում են նաև լիմֆատիկ գեղձերի բորբոքման, ինֆիլտրատի, նրա կրացման և ընդհակառակը, քայքայման և կալվեռմանների գոյացման փաստերի նկարագրություններին: Բրոնխիտների ժամանակ՝ դրանց լորձաթաղանթի բորբոքման բնորոշ՝ ուռչման, հաստացման, անհարթության, բորբոքային պրոցեսի արգասիք հանդիսացող հեղուկի առկայությունը, որի հետեւանքով և բրոնխների լուսանցքների նեղացման առաջացումը, դեզինտերիայի ժամանակ հաստ աղիքներում խոցերի առաջացումը, թոքերի շնչական ուղիներում առաջացած կարմիր ու գորշ բորբոքային զանգվածով լցնելու և շնչական մակերեսը նեղանալու հանգամանքը: Նրանք շատ լավ դիտել ու նկարագրել են զանազան օրգան-սիստեմների բարորակ ու չարորակ նորագոյացությունները և այլ պաթոլոգիական միկրոսկոպիկ պրոցեսները²:

Ուշագրավ է նաև դատաբժշկական էքսպերտ բժիշկ Ն. Ա.

¹ Ա. Ս. Կոնյան, Նյութեր միջնադարյան Հայաստանի վիրաբուժության վերաբերյալ (տես՝ ՀՍՍՌ-ի Ա Հայ բժշկության և բիոլոգիայի պատմության սեկտորի գիտական աշխատությունների ժողովածու, № 1, Երևան, 1948, էջ 101—114):

² А. С. Кцоян, Патолого-анатомические представления армян-врачей в эпоху расцвета феодальных отношений, «Известия» АН АрмССР, БО, № 6, Ереван, 1959, стр. 89—98.

Մակարյանի «Դատական բժշկության պատմության հարցի շուրջը Հայաստանում» (հին ժամանակներից մինչև մեր օրերը) աշխատությունը։ Ուսումնասիրելով մեր Մատենադարանի ձեռագրերը, հայկական հին կանոնագրքերը, Մխիթար Գոշի (XII դ.) և Սմբատ Սպարապետի (XIII դ.) դատաստանագրքերը, հանդում է այն եզրակացությունը, որ հատկապես XII—XIII դարերում դատական բժշկության նպատակներով Հայաստանում կատարել են դիակներ և զանազան պատճառներից տուժված կենդանի մարդկանց քննություն։ Այլևհետև հեղինակը ցույց է տալիս, որ մեզ մոտ կատարել են էքզումպլիա, այսինքն՝ թաղված դիակը հանել և ենթարկել են դատաբժշկական քննության¹։

Այնուհետև, սովետահայ բժշկապատմաբանները՝ իրենց կատարած ուսումնասիրություններում հանդում են այն կարևոր եզրակացության, որ հայ ժողովրդի պետական անկախությունը կորցնելուց հետո (1375 թ.), ընդհուպ մինչև Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացումը (1828 թ.) բուն Հայաստանում բժշկադիտության բնագավառում գիտական քիչ թե շատ արժեք ներկայացնող ոչ մի գործ չի նկատվում։ Ընդհակառակը, դրա փոխարեն բժշկության մեջ առատորեն զարգանում են գիտության հետ ոչ մի առնչություն չունեցող ախթարքներ, հմայիլներ, միստիկա-մոդական բուժման ամեն տեսակի ձևեր ու կերպեր։

Հայրենական Մեծ պատերազմից (1941—1945) հետո սովետահայ բժշկապատմական գրականության մեջ երևան են գալիս մի շարք մենագրություններ և բազմաթիվ հոդվածներ, որոնք լուսաբանում են նախառևոյություն Հայաստանում ժողովրդական առողջապահության, բժիշկների գործունեության և բժշկագիտության պատմության հետ կապված հարցերը։ Այդ աշխատություններից պետք է նշել Լ. Ա. Հովհաննիսյանի «Բժշկության պատմությունը Հայաստանում» աշխատության 4-րդ գիրքը (1947 թ.) ամբողջապես, Ա. Ս. Կծոյանի «Մալաթիան Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև սովետական շրջանը» (1950 թ.) թեկնածուական դիսերտացիան, Լ. Ս. Հովհաննիսյանի «Բժշկական գործը, բուժական հիմնարկները և բժշկական կադրերը Հայաստանում, Հայկական մարդի կազմակերպումից (1828 թ.) մինչև համաշխարհային

1 Ն. Ա. Մակարյան, Դատաբժշկության պատմության հարցի շուրջը Հայաստանում (հին ժամանակներից մինչև մեր օրերը)։ (Թեկնածուական դիսերտացիա, մեքենագիր), 1959։

առաջին պատերազմը» թեկնածուական դիսերտացիան (1951 թ.), Գ. Գ. Հարությունյանի «Մանկաբարձությունը և գինեկոլոգիան Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև սովետական շրջանը» (1952 թ.) դոկտորական դիսերտացիան, Ա. Ա. Լալայանի «Ակադեմիկոս Ի. Պ. Պավլովի ուսմունքը հայ հասարակության մեջ» (1953 թ.) թեկնածուական դիսերտացիան, Խ. Բադալյանի «Ստոմատոլոգիան Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» (1956 թ.) թեկնածուական դիսերտացիան, Ռ. Ս. Փարսադանյանի «Հայ բժշկության պատմությունից» հետաքրքրական մեկնադրությունը (1958 թ.), Ե. Ա. Մակարյանի «Վատաբժշկության պատմության հարցի շուրջը Հայաստանում» (հին ժամանակներից մինչև մեր օրերը) թեկնածուական դիսերտացիան (1959 թ.) և բազմաթիվ հոդվածներ:

Այդ աշխատություններում նշվում է, որ պետական անկախությունը կորցնելուց հետո երկարատև պատերազմների հետևանքով տնտեսապես ու ֆիզիկապես բզկտված Հայաստանն ընկնում է օսմանյան Թուրքիայի և շահական Իրանի, հարյուրամյակներ տևող, կեղեքիչ լծի տակ: Տնտեսական, սոցիալական և կուլտուրական վերին աստիճանի ծանր անկում ապրող Հայաստանում, մինչև Ռուսաստանի հետ միանալը, չի եղել ոչ մի առողջապահական հիմնարկ, հիվանդանոց, բուժարան և դեղատուն: Հայկական մարզի կենտրոնն Երևանում, գավառական քաղաքներում ու գյուղերում տիրում էր կատարյալ հակասանիտարական դրություն, որը բնակչության հետամնացության ու աղքատիկ ապրելակերպի հետ մեկտեղ, նպաստավոր պայմաններ էր ստեղծել սուր վարակիչ հիվանդությունների լայն տարածման և համաճարակների առաջացման համար: Ժողովրդին սպասարկում էին էմպիրիկ փորձի վրա սովորող մի քանի ժողովրդական բժիշկներ, ոսկրահարդարներ, վարսավիրներ, տատմերներ, քահանաներ և ախթարքներով զբաղվող մարդիկ: Գիտական կամ գիտահանրամատչելի բժշկական որևէ գրականություն գոյություն չունեի:

Ժողովրդի առողջապահության բնագավառը սկսում են գիտական մեթոդներ թափանցել Ռուսաստանից ռուսական համալսարանավարտ հայ բժիշկների և ռուս զինվորական բժիշկների ջանքերով: Ի դեպ՝ Հայկական մարզը եկող առաջին դիպլոմավոր հայ բժիշկը եղել է Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետի սան՝ Միմոն Գրիգորի Լոռու-Մելիքյանը: Իր անձնական դիմումի՝ համաձայն, նա նշանակվում է Հայկական մարզի բժիշկ և 1833 թ.

մայիսի 20-ին երկու մանկաբարձուհիների և երկու բուժականների հետ ժամանում է Երևան՝ Նա առաջին հայ բժիշկն է՝ եղել, որ պայքարել է մեր ժողովրդի կենցաղում արմատացած հեռամհաց սովորությունների ու հակաատնիտարական վիճակի դեմ, և այդ ընթացքում սկսել է կիրառել ուսանական առաջադեմ բժշկագիտության նվաճումները։ Այսպես, օրինակ, 1835 թ. օգոստոսի 6-ին Երևանից բժ. Ս. Գ. Լոռու-Մեկիբյանը մեկնում է Օրդուբադ և այնտեղ առարածված համաճարակը վերացնելու նպատակով՝ ձեռնարկում է հակահամաճարակային միջոցառումներ։

Հայկական մարզում լայնորեն տարածված սուր վարակիչ հիվանդությունները մեծ կորուստներ էին պատճառում նաև ուսանական բանակին։ Բանակի բժշկա-սանիտարական ծառայությունը նույնպես պայքարում էր բռնկվող համաճարակների դեմ։ Լ. Ս. Հովհաննիսյանը գրում է, որ այդ նպատակով դեռևս 1829 թ. Երևանում դանվող հոսպիտալին կից, ղինվորական բժիշկ Շումլերի ղեկավարությամբ կազմակերպվում և սկսում է գործել հակաժանտախտային կոմիտեի ժանտախտի դեմ մղվող պայքարում ուսանական ղինվորական հոսպիտալներում աշխատող բժիշկներից, իրենց անձնուրաց գործունեությամբ առանձնապես աչքի են ընկել Շումլերը, Գեպայովիչը, Լիսիցինը, Օլիմպիևը, Դոնցևը, Տենյակովը, Ռումյանցևը, Նեոպոլիտանսկին և Ստեփանովիչը, որոնցից առաջին երեքը հիվանդացել և մահացել են այդ ընթացքում¹։

Սովետահայ բժշկապատմաբանների ուսումնասիրություններում ակնհայտ կերպով ցույց է արված, որ սկսած XIX դարի 30-ական թվականներից ուսանական առաջադեմ բժշկագիտության փորձը դնալով կիրառություն է գտնում Հայաստանում։

«Դատարբժշկագիտության վիճակը Հայաստանում XIX դարի առաջին կեսում» աշխատության մեջ ապացուցված է, որ XVI դարի վերջերից սկսած մինչև 1828 թվականը բուն Հայաստանում դատարբժշկականություն գոյություն չի ունեցել։ Բոլոր տեսակի սպանության, ինքնասպանության, ինչպես նաև զանազան վնաս-

1 Ա. Ս. Կծոյան, XIX դարի առաջին կեսի ուսանական բժշկագիտության առաջին հայ սաները (տե՛ս ՀՍՍՌ ԳԱ-ի հասարակական գիտությունների բաժանմունքի «Տեղեկագիր», № 7, Երևան, 1952)։

2 Լ. Ս. Հովհաննիսյան, Բժշկական գործը, բուժական հիմնարկները և բժշկական կազմերը Հայաստանում Հայկական մարզի կազմակերպվածից (1828 թ.) մինչև համաշխարհային առաջին պատերազմը (1914 թ.) Բեկնաժուռական գիտեր-տաքիայի ավտոնոմիզացումը, Երևան, 1951 էջ 7։

վածքների հետևանքով տուժած անձանց դատաբժշկական քննութ-
թյան շէին ենթարկում և հանցավորներին շէին պատժում: Միայն
Ռուսաստանի հետ միանալուց հետո Հայաստան են ուղարկվում
դատաբժշկության վերաբերյալ ընդարձակ հրահանգչական ցու-
ցումներ, որոնք կազմված էին, ինչպես պարզվեց մեր հետազո-
տությունից, սկադ. Ի. Վ. Բույալսկու 1826 թվականին կազմված
«Руководство врачам при осмотре мертвых» աշխատության
հիման վրա: Մենք չգիտենք որոշակի, թե երբ են ստացված այդ
հրահանգչական ցուցումները, սակայն դրանց համաձայն էջմիածնի
այգիններում անհայտ պատճառներից մահացած մարդկանց դիակ-
ների էքսզումացիայի հիման վրա կատարված դատաբժշկական
քննության ակտերը և տված եզրակացությունները վերաբերում են
1832 թ. օգոստոսի 5-ին¹:

Այնուհետև, XVIII դարի վերջերից սկսած, ռուսական բժշկա-
գիտության դպրոցի լավագույն տրադիցիաների օրինակով՝ հայ
բժիշկները մայրենի լեզվով գրում են ինքնուրույն աշխատություն-
ներ՝ բժ. Պետրոս Քալանթարյանը՝ «Բժշկարան համառոտ»
(1793 թ.), բժշկապետ Ստեփանոս Շահրիմանյանը՝ «Տնկաբանու-
թյուն կամ փղորա Հայաստանի» (1818 թ.) բժշկական բուսաբա-
նական և դեղագիտական ստվարածավալ շատ արժեքավոր գործը,
բժ. Սիմոն-Լոռու-Մելիքյանը՝ «Բժշկարան» (1825 թ.) և այլն:

Ն. Մ. Ամբողիկի աշխատությունների հայերեն թարգմանու-
թյունների շուրջը՝ մեր հոդվածում ցույց ենք տվել, որ XIX դ. առա-
ջին երկու տասնամյակներում արդեն հիմք է դրվում ռուս առաջադեմ
գիտնականների գործերը հայերեն թարգմանելու աշխատանքերին:
Գրավոր խոսքով նույնպես պրոպագանդելով ռուսական բժշկագի-
տության լավագույն ավանդները հայ բժիշկները ձգտում էին մեր
երկրում բժշկական, սանիտարական, առողջապահական գործը գի-
տական հիմքերի վրա դնել²: Ռուսական մանկաբարձության, ման-
կաբուժության և դեղագիտության հիմնադիր պրոֆ. Ն. Մ. Ամբո-
ղիկի աշխատություններից երեքը՝ «Բժշկական բուսաբանությունը»

1 Ա. Ս. Կծոյան և Ն. Ա. Մակարյան, Դատաբժշկագիտության վիճակը Հա-
յաստանում XIX դարի առաջին կեսում: Տես՝ Գլխավոր դատաբժշկագիտա-
կան էքսպերտիզայի բյուրոյի և Երևանի Բժշկական ինստիտուտի դատա-
կան բժշկության ամբիոնի գիտական աշխատությունների ժողովածու, № 1, Երե-
վան, 1956, էջ 48—61 (նույնը լեզվով):

2 Ա. Ս. Կծոյան, Ն. Մ. Ամբողիկի աշխատությունների հայերեն թարգմա-
նությունների շուրջը (տես՝ ՀՍՍՌ ԳԱ Հասարակական գիտությունների բաժան-
մունքի «Տեղեկագիր» № 6, Երևան, 1953, էջ 89—97):

1808—1809 թթ. երկու դրերը և «Ֆիզիոլոգիա և սնուցման ուս-
թյուն» (1814 թ.) թարգմանվել են հայերեն լեզվով Գրանցից եր-
կուսը դանձում են մեր Մատենադարանում և պահվում են 9285 և
9225 համարների տակ, իսկ երրորդը՝ Մոսկվայի Անիսի անվան
գրադարանի հայկական ձեռագրերի ֆոնդի՝ № 8 ձեռագիրն է:

Այնուհետև, սովետահայ բժշկապատմաբանների ուսումնասի-
րություններն ակնառու կերպով ցույց տվեցին, որ մեծ լուսավորիչ
ու դեմոկրատ հաշատուր Արսվյանի և, հատկապես, աշանավոր
ռեուլուցիոն-դեմոկրատ, հրապարակախոս ու գրող Միքայել Նալ-
բանդյանի և նրանց հետևորդների աշխատություններն ու գործու-
նեությունը մեծապես ազդել են նաև XIX դարի երկրորդ կեսի հայ
բժշկական հասարակայնության վրա: Նրանց ազդեցության շնոր-
հիվ ավելի են ուժեղանում հայ բժիշկների հետաքրքրությունն ու
համակրանքը ռուսական բժշկագիտության առաջադեմ մտքի նը-
կատմամբ:

Շատ նշանակալի է Կովկասի ժողովուրդների առողջապահու-
թյան սպասարկման և բժշկագիտության զարգացման խնդրում
տակավին 1864 թվականին Թբիլիսիում կազմակերպված Կովկաս-
յան բժիշկների ընկերության կառարած զրական դերը ժողովրդին
ծառայելու տենչով տոգորված, ընկերության մեջ համախմբված
ոռւտ, վրացի, հայ, ադրեջանցի և այլազգի առաջավոր հայրենա-
սեր բժիշկները իրենց առաջ խնդրի են դնում՝ բարեկարգել ժո-
ղովրդի բուժ-սանիտարական սպասարկման դործը, պայքարել
խիստ տարածված սուր վարակիչ հիվանդությունների դեմ, նպաս-
տել բժշկագիտության զարգացմանը, և կազմակերպել մասնագի-
տական գրականության հրատարակությունը և այլն:

Անցյալ դարի 80—90-ական թվականներից սկսած, հայ գրա-
կանության մեջ զարգացող բժշկական գիտական միտքը կրել է
գերազանցապես ռուսական ինքնատիպ բժշկագիտության բարերար
ազդեցությունը: Այս տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկա-
յացնում Ա. Ա. Լալայանի «Ակադեմիկոս Ի. Պ. Պավլովի ուսմունքը
հայ հասարակության մեջ» վերևում արդեն նշված աշխատությունը:
Այստեղ ուշադրավ փաստերի օգնությամբ հեղինակը բացահայ-
տում է XIX դարի վերջերին, նախառևուլուցիոն շրջանում և ռեուլու-
ցիայից հետո, գլխավորապես Պետերբուրգում և Մոսկվայում
ռուսական ֆիզիոլոգիայի ուսմունքի ոգով հայ գիտական կադրերի
առաջացման և Սովետական Հայաստանում պավլովյան բնագի-
տական-դիալեկտիկա-մատերիալիստական ֆիզիոլոգիական գիտու-
թյան ստեղծման ու զարգացման համառոտ պատմությունը:

Աշխատության մեջ վեր է հանված աշխարհահռչակ գիտնականի աշակերտների՝ Վարդանովի, Լ. Ա. Օրբելու, Խ. Ս. Կոշտոյանցի, Է. Հ. Հասրաթյանի, Ա. Ի. Քարամյանի, Գ. Պ. Մուշեղյանի և այլոց կյանքն ու գործունեությունը:

XIX դարի և XX դարի սկզբի հայ բժշկական գրականության մեջ զարգացող սանիտարական կրթական և հիգիենիկ գիտությունների առաջադեմ մտքին է նվիրված Ռ. Ս. Ֆարսադանյանի «Հայ բժշկության պատմությունից» արդեն հիշատակված մենագրությունը: Հարուստ փաստական նյութերի հիման վրա հեղինակը նկարագրում է հիշյալ շրջանում ապրած յոթ հայ նշանավոր բժիշկների՝ Դավիթ Ռոստոմյանի, Լևոն Տիգրանյանի, Ավետիք Բաբայանի, Մարգար Առուստամյանի, Բագրատ Նավասարդյանի, Արտաշես Բուդաղյանի և Վահան Արծրունու կյանքը, բժշկական, գիտական-հասարակական արդյունավետ ու շնորհակալ գործունեությունը: Նացույց է տալիս, թե ինչպես ցարական դաժան իրականության պայմաններում, վերոհիշյալ բժիշկները քրտնաջան աշխատանք են ծավալում բարձրացնելու ժողովրդի սան-կրթական մակարդակը: Ներանք ձգտել են՝ կիրառել պրոֆիլակտիկ միջոցառումներ և բարեկարգել ժողովրդի բուժ-սանիտարական սպասարկման գործը: Մեր հիշյալ բժիշկներից հատկապես Արտաշես Բուդաղյանը, Մարգար Առուստամյանը, Ավետիք Բաբայանը և ուրիշներ հիվանդությունների առաջացումը սերտորեն կապում էին սոցիալական միջավայրի՝ աղքատության, հակասանիտարական պայմանների և անգործության հետ: Միայն Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո վերացան հիվանդությունների տարածման այդ սոցիալական նախադրյալները:

Սովետական Հայաստանում զարգացող առողջապահության գործի կազմակերպման և բժշկագիտության պատմության ստեղծման ուղղությամբ դեռ շատ քիչ բան է արված: Այստեղ աչքի ընկնող գործ պետք է համարել Լ. Ա. Հովհաննիսյանի «Բժշկության պատմությունը Հայաստանում» աշխատության 5-րդ մեծածավալ հատորը, որը նվիրված է Սովետական Հայաստանում առողջապահության կազմակերպման գործին, բժշկական կրթության, կադրերի պատրաստման և բժշկագիտության զարգացման պատմությանը, մինչև 1947 թ. ներառյալ: Այնուհետև հրատարակված են Խ. Ն. Փիրումյանի և Ս. Ա. Ճճմարիտյանի «Առողջապահության գործը Սովետական Հայաստանում 20 տարում» (1941 թ.), Ա. Ի. Խրիմյանի «Առողջապահության գործի զարգացումը Սովետական Հա-

յատատանում 30 տարում» (1952 թ.), Ս. Պ. Նանասյանի, Ռ. Ս. Փարսազանյանի և Ա. Ի. Խրիմյանի «Առողջապահությունը 40 տարում Սովետական Հայաստանում» (1961 թ.) գրքուկները:

Մեր ռեսպուբլիկայի և միութենական պարբերական մամուլում, գիտական դանազան ժողովածուներում և հանդեսներում լույս են տեսել Սովետական Հայաստանում սուր վարակիչ հիվանդությունների դեմ մղած պայքարում ձեռք բերված հաջողություններին, Երևանի Պետական Բժշկական ինստիտուտին, ինչպես նաև մալարիայի և բժշկական պարազիտոլոգիայի, կուրորտոլոգիայի և ֆիզիկական մեթոդներով բուժման, մանկաբարձության և գինեկուլոգիայի, ռենտգենոլոգիայի և օնկոլոգիայի, արյան փոխներարկման և հեմատոլոգիայի, օրտոպեդիայի և տրավմատոլոգիայի և այլ ինստիտուտների լաբորատորիաների ստեղծման և զարգացման պատմությունը նվիրված առանձին հոդվածներ: Ուշագրավ են Մ. Մ. Մելիք-Քարամյանի «Երևան քաղաքի բնակչության առողջական վիճակը և նրա առողջապահության սպասարկման գործի կազմակերպումը մինչև 1941 թ.» (ձեռագիր, 1958 թ.), Գ. Ա. Ղևոնդյանի «Հայկական ՍՍՌ-ի առողջապահությունը 25 տարում» (1946 թ., ձեռագիր) ուսումնասիրությունները: Սովետահայ բժշկա-պատմաբանների հրատարակած աշխատանքների շնորհիվ, Հայաստանում զարգացող բժշկագիտության պատմությունը տեղ է գտել նորերս հրատարակված բժշկագիտության մեծ հանրագիտարանում—ԵՄՁ-ի № 17, Միության բժշկական բուհերի համար գրված պրոֆ. Պ. Մուլառնովսկու «Բժշկագիտության պատմություն» (1961 թ.) դասագրքի և այլ մենագրություններում ու հանդեսային հոդվածներում:

Բացի մեր միութենական կենտրոնական քաղաքներում հրավիրվող բժշկագիտության պատմության նվիրված գիտական սեսիաններից և կոնֆերանսներից սովետահայ բժիշկ-պատմաբանները (Լ. Ա. Հովհաննիսյան և Ա. Ս. Կծույան) զեկուցումներով հանդես են եկել միջազգային բժշկագիտական կոնգրեսներում:

Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության ամենօրյա հոգատարության շնորհիվ Սովետական Հայաստանում ժողովրդի առողջապահությանը սպասարկող հիմնարկների խիտ ցանցը և հատկապես բժշկագիտության բնագավառում ստեղծված գիտական մեծ արժեք ներկայացնող աշխատությունները, իրենց նշանակությամբ դուրս են եկել ռեսպուբլիկայի և միութենական սահմաններից:

ДОСТИЖЕНИЯ ИСТОРИОГРАФИИ МЕДИЦИНЫ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ ЗА 40 ЛЕТ

Р е з ю м е

Советские историки медицины акад. Л. А. Оганесян, Х. А. Мелик-Парсаданян, Г. Г. Арутюнян, А. С. Кцоян, Г. О. Язмаджян и др. путем всестороннего и детального изучения истории армянского народа, археологии, материальной культуры, филологии и этнографии убедительно доказали, что медицинская культура была развита в Армении еще за несколько веков до нашего летосчисления.

В раннем средневековье в Армении существовали лепрозории, больничные учреждения с различными отделениями: терапевтическим, хирургическим и для острозаразных больных. Помимо наличия богатой литературы на родном языке, в Армении в течении VI—VIII вв. были переведены на армянский язык некоторые труды классиков греко-римской медицины: Гиппократ, Аристотеля, Диоскоридоса Орибазиса и др.

Исследованиями советских историков медицины доказано, что классики армянской медицины — Мхитар Гераци (XII в.), врач Григорис (XIII в.), Амирдовлат Амасаци (XV в.) и др. в своей практической врачебной и научной деятельности широко пользовались как арабской медицинской литературой, так и оригинальными трудами греко-римских врачей. Специальными исследованиями истории медицины эпохи расцвета феодальных отношений (XI—XIII вв.) доказано, что врачи-армяне, освоив лучшие достижения греко-римской, византийской и так называемой арабской медицины, продолжали развивать свою самобытную медицину и в отдельных отраслях медицинских знаний достигли больших успехов.

После присоединения Армении к России под благотворным влиянием русской передовой медицинской науки в стране происходит постепенное улучшение постановки здравоохранения: в лечебно-санитарной, профилактической областях.

В тот же период появляются и научные работы.

Далее дается обзор медицинской литературы, посвященной вопросам народного здравоохранения, медицинского образования и науки в период Советской власти.